# Հադրութի շրջանի հայկական գյուղերում ազերի օմոնականների կատարած գործողությունների մանրամասները

Մայիսի 13-ին առավոտյան ժամը 7-ին ադրբեջանական օմոնականները եւ ԽՍՀՄ ՆԳՆ-ի ներքին զորքերի ստորաբաժանումները շրջապատեցին մարզի հարավային գրեթե 10 գյուղերը: «Անձնագրային ռեժիմի ստուգման» պատրվակի տակ օմոնականները թալանել են տեղացիների տները, ծեծել մարդկանց: Ինչպես հաղորդել են Հադրութի գործկոմից, կատարվել են ձերբակալություններ: Ձերբակալել են 40-ից ավելի արցախցիների, այդ թվում նաեւ գյուղերի ղեկավարների եւ տարել ադրբեջանական Ջեբրայիլ շրջկենտրոն: Նրանց մի մասը բաց է թողնվել, բայց դեռեւս 10 մարդ մնացել են այնտեղ:

Ըստ ապացույցների, նրանց պարտադրել են ենթարկվելու Ադրբեջանի օրենքներին: Հակառակ դեպքում, ինչպես վկայում են Հադրութի շրջգործկոմի ներկայացուցիչները, հայերին սպառնացել են տեղահանել Լեռնային Ղարաբաղից: